

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի
պատասխաններ

12-րդ դասարան

Համո Սահյան «Գուրգեն Մահարի»

Էջմիածնա վանքի բակում
Խեղճ ու կրակ որբերի ծով:
Պաշարել է ծովն՝ անողոք,
Անհնարին, անհուն մի սով:
Աչքերի մեջ մութ մի ժպիտ,
Սիրտը լիքն է ողբ ու լացով,
Հույսի նշխարն ատամի տակ,
Ուշքն իրենց տան մառանին է,
Գաղթականի շորեր հագած
Ինքը՝ Գուրգեն Մահարին է:
Հետո հազար մազե կամուրջ,
Հետո որբ է որբանոցում,
Սրտում հազար անուրջ ու սեր,
Երգի տեսրակ ունի ծոցում....
Եվ գալիս է Չարենցը մեծ,
Բանաստեղծ է նրան օծում:
Ու գնում է այս աշխարհից
Անմահների ճանապարհով....
Հոգին Սասնա Ծուռ է դարձել,
Տակը Քուռկիկ Ջալալին է....
Դասականի շորեր հագած
Ինքը՝ Գուրգեն Մահարին է:

Համո Սահյանի այս ընծայականը Գուրգեն Մահարու լավագույն բնութագիրն է, որբության բաժակը մինչև մրուրը ճաշակած մեծ տառապյալը «վայելեց» աքսորի անմարդկային տառապանքները և մահկանացուն կնքեց հայրենի հողից դուրս. հիրավի՝ անիծյալ ճակատագիր. Էգեստարի զովասուն այգիներում իր անուրախ «ուրախ» մանկության հեքիաթն ընդհատվեց գաղթի ճանապարհին, իսկ պատանեկությունը «ծաղկեց» ծանր կորուստներով՝ քրոջ՝ Ադրինեի, տատի՝ Յուդաբեր-Օդիկի, Չալո շուն-ընկերոջ, այնուհետև՝ «քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց, մահճակալից մահճակալ» ու... Չարենց, բանաստեղծություն, ճանաչում: Այս իսկ պատճառով երիցս ճիշտ է սահյանական բնութագիրը: Հրաշալի, շենշող պատկերներով է հիշում Մահարին իր մանկությունը, այդպիսի մի քանդակ է «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին» բալլադը: Չալուն

բանաստեղծի շունն է, նրա առաջին սերը, առաջին թրթիռը: Չալոյի աչքերով բանաստեղծին է նայում սիրած աղջիկը՝ դարչնագույն մազերով: Իսկ աղջկա աչքերով Չալոն է նայում: Չալոյի ու պատանի հերոսի պտույտները դաշտերում շքահանդես են, զուգված- գարդարված Չալոն հպարտ է, հաղթանակած: Նա այս բալլադի ոգին է, արթնացած մանկության այրող հուշը: Նրանց ճակատագրերը նույնն են, մեկը գաղթի ճամփեքին տրորվել է ձիու սմբակների տակ, մյուսին բախտը նետել է օտար քաղաքներ: Գեղեցիկ սկիզբը տխուր ավարտ է ունենում, և մնում են միայն անմոռաց հուշերը. «Քեզ չեմ մոռացել, կորած ընկերս, Քեզ չեմ մոռացել, իմ շուն»: Երբեք չի մոռացվի այն հրաշալի պահը. Ես հանում էի իմ գրոցից

Գույնզգույն լաթեր ու սրմա,
Զարդարում էի պոչից մինչև վիզ
Ու տանում դաշտերը նրան:
Չալոն քայլում էր պչրուհու նման,
Սլվլուն պոչը բռնած ցից.
Քսվում էր ոտքիս, մոռում էր մռայլ,
Մոռում էր հպարտ հաճույքից:

Չալոն իմ շունն էր, չալ-չալ աչքուն էր....

«Ծաղկած փշալարեր» վիպակը դառնադի ասք է միլիոնավոր խեղված, հանիրավի լլկված մարդկանց մասին, ովքեր անգամ անմարդկային պայմաններում կարողանում են ժպտալ ու ապրել, անգամ սիրել են կարողանում և ասում են. «Օրհնյալ լինես դու, կյանք»: Անելանելի մահացու տխրության մեջ անգամ Մահարին ժպտում է երգիծանքով, փշալարերը բերում են քամու արյունոտ երգը, այդ երգի մեջ Մեծ մարդասերը ծաղկեցնում է սերը, «հում...հում...հումանիզմը»: Ապրելու կամքից են ծաղկում ժանգոտ փշալարերը. հաղթում է ապրելու տենչը՝ ծաղրելով դաժանությունը: Այդպես ապրեց Մահարին իր ահավոր ծանր կյանքը, ապրեց առանց չարության և ապրեցրեց բոլորիս: Մահարին ապրեց՝ արհամարհելով բոլոր« Չի՛ կարելիները», մերժելով բոլոր տեսակի ստորացումները, ծաղրը, անարգանքը: Ի հեճուկս այս ամենի՝ փշալարերը շարուակում են ծաղկել՝ հաստատելով կյանքի հաղթանակը:

2. Հայ գրականության սիրելի դեմքերից է Միլվա Կապուտիկյանը՝ նուրբ քնարերգուն, խոհուն պատմողը, անկաշառ հայրենասերը: Նրա ստեղծագործությունները մեր հոգիները լցնում են արժանապատիվ հպարտությամբ, հայ լինելու բախտավորությամբ, և մենք քայլում ենք նրա հետ «աշխարհի ճանապարհներին՝ նրա ողենշած կաճաններով», Նրա հոգնատանջ «քարավանների» հետ վերադառնում ենք միակ հանգրվանը՝ Հայաստան, այնտեղ գծելու «Խճանկար հոգու և քարտեզի գույներից»: Կապուտիկյանը գրականություն է մտել միանգամից, համարձակ, արժամապատիվ: Իրավացի է Վարպետի գնահատականը դեռևս հեռավոր 50-ականներին. «Չլինե՞ր ծովը, երկնքի պատկերը երկրի վրա չէր լինի, չլինե՞ր քո պոեզիան՝ շատ խավար կլինե՞ր մեր երկիրը»:

Այո՛, Միլվա Կապուտիկյանի ստեղծագործությունը լուսավորեց մեր երկիրը՝ իդեմս նրան ընթերցող աշակերտի ու բժշկի, հողագործի ու գիտնականի: Այդ լույսի թարգմանն է բանաստեղծուհու հրաշակի պոեմը՝ «Մտորումներ ճանապարհի կեսին»: Պոեմը ոչ միայն հանդարտ մտորում է, այլև հարատևելու գաղտնիքի բանալի, արժանապատիվ ապրելու դեղատոմս: Իսկ ինչո՞ւ ճանապարհի կեսին. այն գրվել է 1961-ին. դա բանաստեղծուհու անցած ճանապարհի կեսն է պայմանականորեն (ծնվել է 1919-ին, տպագրվել 1933-ին), դա մեր ժողովրդի անկանգ երթի կեսճանապարհն է. այն վերջ է, ուստի միշտ կանգնելու ենք կեսճանապարհին՝ ի մի բերելու մեր անցածը, արժևորելու մեր ներկան և հաստատելու մեր անխախտ ուխտը դեպի ապագան: Պոեմն ունի երկու բնաբան՝ Միամանթո և Թումանյան.

**Ով մարդկային արդարություն, Թող ես թքնեմ քո ճակատին
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:**

Այս բնաբանն էլ տալիս է պոեմի վերնագրի ընտրության հարցը. մենք պետք է **«ապրենք վրեժ առնելով, ավերումի դեմ մեր ստեղծելով, նորից տուն դարձող մեր քարավանով»:** Եվ հպարտ է բանաստեղծուհին չի հավատում, որ կարող է սպառվել հավերժ նորացող այն երակը, որ Սարյան ու Խաչատրյան է ծնում, Համբարձումյան ու Սևակ է ծնում, Վարդան ու Արամ է ծնում, Անդրանիկ ու Մոնթե է ծնում, Նժդեհ ու Խանջյան է ծնում: Ամեն օր մի փոքրիկ է ծնվելու՝ շարունակելու մեր ժողովրդի երթը և, ճանապարհի կեսին կանգ առնելով, հպարտորեն կրկնելու է սիրելի բանաստեղծուհուն.

Օրհնում եմ բախտս, որ աշխարհը թողած ծնվել եմ այստեղ ու որդին եմ քո:

4. Կոստան Ջարյանը հայ գրականության մեծ տարագիրն է «հեռավոր նավարկությունների նավապետը», ով ամբողջ կյանքում դեգերեց հինգ աշխարհամասերում, ըմբռնեց անտիկ ու եվրոպական գրականությունների ողջ հարստությունը, սեփական հայրենիքում հանիրավի անտեսված էր գրական այս հսկան: Հետաքրքիր է, որ ոչ միայն նրա անձնական կյանքն էր դժվար ու անխիտ, այնպես էլ գրական կյանքում նա կրեց անասելի վիրավորանք՝ կապված հատկապես «Նավը լեռան վրա» վեպի խորհրդային հրատարակության հետ: Ջարյանի ստեղծագործության 2-րդ շրջանի գործ է «Նավը լեռան վրա» վեպը: Այս վեպի ճակատագիրը նման է Ջարյանի ճակատագրին՝ հանիրավի հալածված: Վեպը պատկերում է 1918-1920 թվականների Հայաստանը՝ Առաջին և Երկրորդ հանրապետությունների անկումն ու ծնունդը: Այն առաջին անգամ լույս է տեսնում 1943-ին Բոստոնում, Իսկ 2-րդ անգամ՝ 1963-ին Երևանում: Միանգամայն տարբեր գրքեր, քանի որ Խորհրդային Հայաստանի ղեկավարները ցանկանում էին տեսնել նավը լեռան վրա, այսինքն՝ խորհրդային կարգերի անվերապահ հաղթանակը, ժողովրդի բարեկեցիկ կյանքը, արդարացված պայքարը: ՄԻՆչդեռ առաջին հրատարակության մեջ նավը մնում է Քանաքեռի բարձունքում, իսկ գլխավոր հերոս Արա Հերյանը կորչում է մթության մեջ: 2-րդ հրատարակության մեջ այլևս չկային Հայաստանի Առաջին Հանրապետության և այն ժամանակվա վարիչների դրական գործունեությունը պատկերող հատվածները, սառեցված էր անկախության

խանդավառությունը, վերացված էին հակառուսական և թուրք- թաթարական «ինտերնացիոնալ բարեկամության» դրվագները, աղավաղվել էր լեզուն, եղել էին նոր, անհարկի հավելումներ: Չարյանը այդ ժամանակ Երևանում էր. թանձր վարագույրով է փակված այդ շրջանի Չարյանի արձագանքը, բայց սփյուռքը անարգանքի սյունին գամեց հեղինակին՝ մեղադրելով գաղափարական սկզբունքինդավաճանելու և հավատուրացության մեջ: Դա սարսափելի էր Չարյանի նման խորաթափանց գրողի համար, այդ պատճառով էլ նա օտար էր իր եառջևը, կու՛մ առ կու՛մ խմում և ժամերով լռում»:

1930-ին Չարյանը Բոստոնում հրատարակում է «Տատրագոմի հարսը» պոեմը, որը բուռն հետաքրքրությունների և քննադատության ալիք առաջացրեց: Ըստ Ռուբեն Տեր-Մինասյանի՝ պոեմի հիմքում ընկած է մի իրական դեպք: Պոեմը բաղկացած է 5 մասից՝ **Գյուղում հարսանիք է, Հովանը գնում է զինվոր, Ֆեդայիներ, Մանան, Մահը**: Մանային վաղ տարիքում, իր կամքին հակառակ, ամուսնացնում են Հովանի հետ: Հարսանիքի ժամանակ լուր է տարածվում, որ թուրքերը հարևան գյուղի վրա հարձակվել են և ավարառել ամեն ինչ. «աղջիկ են տանում, տավար ու նախիր, դիրքեր բռնեցեք»: Գյուղը դիմում է ինքնապաշտպանության, բայց ողջ գիշեր խրախճանած թուրքերը լուսադեմին հեռանում են՝ տանելով ամբողջ բերքը: Հովանը ընդվզում է. «մինչև երբ պիտի ծռենք մեր վիզ տավարի նման... Բա նամուս չունինք»: Նա քահանայի մոտ հաղորդվում է և հեռանում՝ պատվիրելով. «Մանան չմոռնաք... Ինձ համար ընդմիշտ աշխարհ վերջացավ... Հայդուկն իր կնոջ հոգալ չի կարող, թող ժողովուրդը հսկե, մտածե»: Անցնում է վեց տարի. Մանան հոգնում է սպասելուց. նա այլևս ոչ ոքի չի հարցնում Հովանի մասին: Մի անգամ էլ անտառում մենակ զբոսնելիս նրա երգը լսում է քուրդ երիտասարդը, սիրահարվում և փախցնում: Այ-մ բոլորը հիշում են մոռացված Մանային, անիծում, հայհոյում> Ֆեդայիները լսում են այդ մասին, հարձակվում ու սպանում քրդին: Մանան խնդրում է չսպանել քրդին. « Ես սիրեցի... մե՞ղք էսիրել... Ես ոչ ոքի երդում չտվի մնալ այրի, մնալ մենակ, ընդմիշտ մենակ... Ես սիրեցի, մե՞ղք է սիրել»: Պոեմում հակադրվում են հայրենիքն ու մարդկային սովորական զգացմունքները. Մանան երջանկություն չի ապրել, ամուսնու քնքշանք ու սեր չի տեսել. նա չի հակադրում հայրենիքը անձնական երջանկությանը, նա ուզում է սիրել ու սիրվել: Ֆեդայիները տանում են Մանային և ստիպում Հովանին՝ սպանել նրան: Հովանն սպանում է նրան, նետում արյունոտ թուրք ու խելագարված փախչում: Չարյանի բողոքն ուղղված է թուրքական բռնակալության դեմ, աշխարհի անիրավության դեմ, մարդու ազատ ապրելու, նրա արդար վաստակը բռնադատողների դեմ, որի արդյունքում կատարվում են անասելի, անհասկանալի ողբերգություններ:

4. Այս հարցի պատասխանը պետք է գրես ինքդ՝ օգտվելով քո կարդացած գրքերից՝ Եղիշե «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի», Խորենացի «Հայոց պատմություն», Մուրացան «Գևորգ Մարգարետունի», ԲաժՖի «Դավիթ Բեկ», «Մամվել», Ստեփան Չորյան «Հայոց բերդը», «Պապ թագավոր», Դեմիրճյան «Վարդանանք», Սերո Խանգաղյան «Նժդեհ», «Անդրանիկ», «Մխիթար սպարապետ», Զեյթունցյան «Արշակ Երկրորդ»: Բոլոր գրքերը տրվում են որպես ուղեցույց. ընտրի՛ր քո կարդացածը:

Գնահատման չափանիշները /12-րդ դասարան/

1-ին հարց 1 ենթահարց՝ 1 մ. 2 ենթահարց՝ 3 մ. 3 ենթահարց՝ 1 մ.	2-րդ հարց 1 ենթահարց՝ 2,5 մ. 2 ենթահարց՝ 2,5 մ.
3-րդ հարց 1 ենթահարց՝ 0,5 մ. 2 ենթահարց՝ 1 մ. 3 ենթահարց՝ 0,5 մ. 4 ենթահարց՝ 3 մ.	4-րդ հարց Բոլոր ենթահարցը միասին՝ 5 մ.